Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-387-04.10.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «68000» թիվը փոխարինել «75000» թվով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2.** Գործավարձով կամ ժամավճարով վարձատրվող աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանել՝

1) աշխատաժամանակի նորմալ տեւողության դեպքում՝ 40-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 450 դրամ.

2) աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում՝

ա. մինչեւ 24-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 750 դրամ.

բ. 36-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 500 դրամ:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ նախադասության մեջ «պահպանվում է գործող» բառերը փոխարինել «սահմանվում է» բառերով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4.** Նվազագույն ամսական աշխատավարձի, գործավարձով եւ ժամավճարով վարձատրվող աշխատողների համար սահմանված ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, հավելումները, հավելավճարները, պարգեւատրումները եւ լրավճարները:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ եւ 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-387-04.10.2022-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «68000» թիվը փոխարինել «75000» թվով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

« Գործավարձով կամ ժամավճարով վարձատրվող աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանել՝

1) աշխատաժամանակի նորմալ տեւողության դեպքում՝ 40-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 450 դրամ.

2) աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում՝

ա. մինչեւ 24-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 750 դրամ.

բ. 36-ժամյա աշխատանքային շաբաթ՝ 500 դրամ:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ նախադասության մեջ «պահպանվում է գործող» բառերը փոխարինել «սահմանվում է» բառերով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Նվազագույն ամսական աշխատավարձի, գործավարձով եւ ժամավճարով վարձատրվող աշխատողների համար սահմանված ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, ~~նպատակային~~ սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, հավելումները, հավելավճարները, պարգեւատրումները եւ լրավճարները:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ եւ 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-387-04.10.2022-ԱՍ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-387[1]-04.10.2022-ԱՍ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված և «**Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին**» ՀՀ օրենքի	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»՝ առաջարկում ենք Նախագծերի փաթեթում կիրառված «նպատակային սոցիալական» ձեւակերպումը փոխարինել «սոցիալական» ձեւակերպմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	բովանդակությունը, առ այն, որ, որպես Հայաստանի Հանրապետությունում կիրառվող պետական վճար, նախատեսված է սոցիալական վճարը: Միաժամանակ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի բովանդակությունից արդեն իսկ բխում է, որ սոցիալական վճարը հանդիսանում է նպատակային վճար:		
2.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի «Հոդված 2.» բառերն առաջարկում են շարադրել թավ տառատեսակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	«**Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ հոդվածի «Հոդված 4.» բառերն առաջարկում ենք շարադրել թավ տառատեսակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4.	ՀՀ կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում**	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	նախագծի վերնագրում նշված «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծում կատարված են երկու փոփոխություններ: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից:		

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**